|          |                                                                                                                                      |     |      |            |   |           |
|----------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|------|------------|---|-----------|
| 90511100 | Վանաձոր համայնքի 6-րդ գոտու փողոցների սանիտարական մաքրում և կենցաղային աղբահանություն /2023թ. մարտ-դեկտեմբեր/                        | ՀՄԱ | դրամ | 36695185   | 1 | 36695.185 |
| 90511100 | Վանաձոր համայնքի 1-ին գոտու փողոցների սանիտարական մաքրում և կենցաղային աղբահանություն /2023թ. մարտից-հունիսի 30/                     | ՀՄԱ | դրամ | 22 950 458 | 1 | 22950.458 |
| 90511100 | Վանաձոր համայնքի 6-րդ գոտու փողոցների սանիտարական մաքրում և կենցաղային աղբահանություն /2023թ. մարտից-հունիսի 30/                     | ՀՄԱ | դրամ | 14 433 304 |   | 14433.304 |
| 90511100 | Վանաձոր համայնքի 2023թ. մարտից դեկտեմբեր ամիսների համար Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի կենցաղային աղբահանության ծառայություններ | ԳՀ  | դրամ | 6000000    | 1 | 6000,00   |
| 90511100 | Վանաձոր համայնքի 2023թ. մարտից դեկտեմբեր ամիսների համար Վանաձոր համայնքի Դարպաս բնակավայրի կենցաղային աղբահանության ծառայություններ  | ԳՀ  | դրամ | 1999996    | 1 | 1999,996  |
| 90511100 | Վանաձոր համայնքում շաբաթօրյակների իրականացման ծառայություններ                                                                        | ԳՀ  | դրամ | 3000000    | 1 | 3000.00   |
| 90511100 | Վանաձոր համայնքի 1-ին գոտու կենցաղային աղբահանություն և սանիտարական մաքրում                                                          | ԳՀ  | դրամ | 23274900   | 1 | 23274,90  |
| 90511100 | Վանաձոր համայնքի 6-րդ գոտու կենցաղային աղբահանություն և սանիտարական մաքրում                                                          | ԳՀ  | դրամ | 14750000   | 1 | 14750,00  |
|          | <b>ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ /հոդված-4239/</b>                                                                                                     |     |      |            |   |           |
| 45231183 | Տարոն -4 թաղամասի աղբաթափման վայրի հարակից տարածքի հարթեցման և մաքրման աշխատանքներ                                                   | ԳՀ  | դրամ | 3000000    | 1 | 3000.00   |
|          | <b>Հոդված-5129</b>                                                                                                                   |     |      |            |   |           |

|                                                                  |                                                                                                                                            |     |      |           |     |           |
|------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|------|-----------|-----|-----------|
| 34141320                                                         | Վանաձոր համայնքի կարիքների համար աղբատար մեքենաների ձեռքբերում                                                                             | ԷԱՃ | դրամ | 41300000  | 4   | 165200.00 |
| <b>ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ /հոդված-5129/</b>                                 |                                                                                                                                            |     |      |           |     |           |
| 39224342                                                         | Մետաղական աղբամանների պատրաստում                                                                                                           | ԷԱՃ | հատ  | 134848    | 37  | 4989.376  |
| 39224342                                                         | Մետաղական փոքր աղբամանների պատրաստում                                                                                                      | ԷԱՃ | հատ  | 59936     | 50  | 2996.80   |
| <b>ԱՊՐԱՆՔՆԵՐ /հոդված-5129/</b>                                   |                                                                                                                                            |     |      |           |     |           |
| 39224341                                                         | Աղբարկղներ                                                                                                                                 | ԷԱՃ | հատ  | 135000    | 350 | 47250.0   |
| <b>Բաժին -05 խումբ -4 դաս-1 Կենսաբազմազանություն և բնություն</b> |                                                                                                                                            |     |      |           |     |           |
| <b>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ/հոդված-4239/</b>                              |                                                                                                                                            |     |      |           |     |           |
| 90721100                                                         | Թափառող կենդանիների վնասազերծման(ստերիլիզացիա) ծառայություններ                                                                             | ԳՀ  | դրամ | 9990000   | 1   | 9990.00   |
| <b>Բաժին -06 խումբ -1 դաս-1 Բնակարանային շինարարություն</b>      |                                                                                                                                            |     |      |           |     |           |
| <b>Աշխատանքներ /հոդված-4251/</b>                                 |                                                                                                                                            |     |      |           |     |           |
| 45611300                                                         | Վանաձոր համայնքի Ուսանողական փողոցի թիվ 14 հանրակացարանի շենքի մասնակի հիմնանորոգման աշխատանքներ                                           | ՄԱ  | դրամ | 750000    | 1   | 750.00    |
| <b>Բաժին -06 խումբ -4 դաս-1 փողոցների լուսավորում</b>            |                                                                                                                                            |     |      |           |     |           |
| <b>/հոդված-4239/ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>                             |                                                                                                                                            |     |      |           |     |           |
| 50231200                                                         | Վանաձոր համայնքի փողոցային լուսավորության,շենքերի արտաքին լուսավորության սպասարկում և շահագործում /2023թ. հունվար-փետրվար/                 | ԳՀ  | դրամ | 3800000   | 1   | 3800,00   |
| 50231200                                                         | Վանաձոր համայնքի փողոցային լուսավորության,շենքերի արտաքին լուսավորության սպասարկում և շահագործում /2023թ. մարտից դեկտեմբեր ամիսների համար/ | ԳՀ  | դրամ | 22317040  | 1   | 22317,04  |
| <b>/հոդված-5113/ Աշխատանքներ</b>                                 |                                                                                                                                            |     |      |           |     |           |
| 45311138                                                         | Վանաձոր համայնքի գլխավոր փողոցների լուսավորության համակարգի արդիականացում                                                                  | ԲՄ  | դրամ | 179987600 | 1   | 179987,60 |

|          |                                                                                                                                  |    |      |          |    |          |
|----------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|------|----------|----|----------|
| 45451800 | Վանաձոր համայնքի Բանյո-Նալբանդյան փողոցի լուսավորության վերականգնում                                                             | ԳՀ | դրամ | 9993900  | 1  | 9993,90  |
| 45451800 | Վանաձոր համայնքի լուսավորության վերականգնում                                                                                     | ԳՀ | դրամ | 3202496  | 1  | 3202,50  |
|          | <b>Բաժին -06 խումբ -3 դաս-1 ջրամատակարարում</b>                                                                                  |    |      |          |    |          |
|          | <b>Ծառայություններ /հոդված-4239/</b>                                                                                             |    |      |          |    |          |
| 98111140 | Շատրվանների սպասարկում                                                                                                           | ՄԱ | դրամ | 16141682 | 1  | 16141.7  |
|          | <b>Աշխատանքներ /հոդված-5112/</b>                                                                                                 |    |      |          |    |          |
| 45451700 | Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի 6-րդ փողոցում գտնվող ջրատար առվակի վերակառուցման աշխատանքներ                                 | ՄԱ | դրամ | 978400   | 1  | 978.4    |
|          | <b>/հոդված-5129/</b>                                                                                                             |    |      |          |    |          |
| 44411418 | Ցայտադրյունների համար փականների ձեռքբերման                                                                                       | ՄԱ | դրամ | 22660    | 20 | 453.2    |
|          | <b>Բաժին -06 խումբ -5 դաս-1 Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ</b> |    |      |          |    |          |
|          | <b>Աշխատանքներ /հոդված-5134/</b>                                                                                                 |    |      |          |    |          |
| 71241200 | Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ                                                                              | ԳՀ | դրամ | 5800000  | 1  | 5800.000 |
| 71241200 | Վանաձոր համայնքի մի շարք փողոցների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ                | ԳՀ | դրամ | 10800000 | 1  | 10800,0  |
| 71241200 | <b>Վանաձոր քաղաքի 2024թ. համար սուբվենցիոն ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում/հոդված 5134/</b>                  |    |      |          |    | 21400,00 |
| 71241200 | Վանաձոր համայնքի Ուսանողական, Շինարարների և Վ.Համբարձումյան փողոցի հիմնանորոգում                                                 | ԳՀ | դրամ | 4000000  | 1  | 4000,00  |

|          |                                                                                                                                      |    |      |         |   |           |
|----------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|------|---------|---|-----------|
| 71241200 | Վանաձոր համայնքի Բաթումի, Տերյան փ. Մխիթար Գոշ-Միեր Մկրտչյան, Թատերական-Սոս Սարգսյան,և Զատենակ տնտեսության հիմնանորոգում             | ԳՀ | դրամ | 4400000 | 1 | 4400,00   |
| 71241200 | Վանաձոր համայնքի Տարոն 2,3,4 թաղամասերի փողոցների հիմնանորոգում                                                                      | ԳՀ | դրամ | 4300000 | 1 | 4300,00   |
| 71241200 | Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի փողոցների հիմնանորոգում                                                                          | ԳՀ | դրամ | 1100000 | 1 | 1100,00   |
| 71241200 | Վանաձոր համայնքի Դարպաս բնակավայրի ներհամայնքային փողոցների հիմնանորոգում՝ սալարկմամբ                                                | ԳՀ | դրամ | 1200000 | 1 | 1200,00   |
| 71241200 | Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրի փողոցների լուսավորության համակարգի կառուցում                                                   | ԳՀ | դրամ | 800000  | 1 | 800,00    |
| 71241200 | Վանաձոր համայնքի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատի և <<Գրիգոր Հախինյանի անվան երաժշտական դպրոց ԿՈԻՀ>> ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում | ԳՀ | դրամ | 1600000 | 1 | 1600,00   |
| 71241200 | Վանաձոր համայնքի թիվ 7 տնակային մանկապարտեզի շենքի կառուցում                                                                         | ԳՀ | դրամ | 2000000 | 1 | 2000,00   |
| 71241200 | Վանաձոր համայնքի <<Ա.Ազարյանի անվան Կենտրոն համալիր մարզադպրոցի>> շենքի հիմնանորոգում                                                | ԳՀ | դրամ | 2000000 | 1 | 2000,00   |
|          | <b>Բաժին -06 խումբ -6 դաս-1 Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)</b>                        |    |      |         |   |           |
|          | <b>Աշխատանք/հոդված-5113/ Բակերի բարեկարգում՝</b>                                                                                     |    |      |         |   | 29393,063 |
| 45221142 | Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի թիվ 17 շենքի բակի բարեկարգում                                                                           | ԳՀ | դրամ | 7039634 | 1 | 7039,634  |
| 45221142 | Վանաձոր համայնքի Զաքարյան փողոցի թիվ 10 շենքի բակի բարեկարգում                                                                       | ԳՀ | դրամ | 8730416 | 1 | 8730,416  |
| 45221142 | Վանաձոր համայնքի Զաքարյան փողոցի թիվ 12 շենքի բակի բարեկարգում                                                                       | ԳՀ | դրամ | 6945803 | 1 | 6945,803  |

|                                                                  |                                                                                                                                                 |     |      |          |   |           |
|------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|------|----------|---|-----------|
| 45221142                                                         | Վանաձոր համայնքի Չաքարյան փողոցի թիվ 14 շենքի բակի բարեկարգում                                                                                  | ԳՀ  | դրամ | 6677210  | 1 | 6677,210  |
| 45221142                                                         | Վանաձոր համայնքի Շիրակի խճուղու թիվ 282-ենքի բակի բարեկարգում                                                                                   | ԳՀ  | դրամ | 11054274 | 1 | 11054,274 |
| <b>Աշխատանք/հոդված-5112/</b>                                     |                                                                                                                                                 |     |      |          |   |           |
| 45211273                                                         | Վանաձոր համայնքի կարիքների համար Արցախյան 2-րդ պատերազմում զոհված զինծառայողների նոր պանթեոնում նոր շիրիմների կառուցման աշխատանքներ             | ԳՀ  | դրամ | 11941336 | 1 | 11941,336 |
| 45211273                                                         | Վանաձոր համայնքի կարիքների համար Արցախյան 2-րդ պատերազմում զոհված զինծառայողների նոր պանթեոնում նոր շիրիմների կառուցման աշխատանքներ /լրացուցիչ/ | ՄԱ  | դրամ | 1009420  | 1 | 1009,420  |
| <b>Բաժին -08 խումբ -1 դաս-1 Հանգստի և սպորտի ծառայություններ</b> |                                                                                                                                                 |     |      |          |   |           |
| <b>/հոդված-4239/ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>                             |                                                                                                                                                 |     |      |          |   |           |
| 92621110                                                         | սպորտային միջոցառումների կազմակերպում                                                                                                           | ԷԱԾ | դրամ | 11955600 | 1 | 11955.600 |
| <b>/հոդված-4261/</b>                                             |                                                                                                                                                 |     |      |          |   |           |
| 79951100                                                         | միջոցառման մասնակցության կազմակերպման ծառայություն                                                                                              | ԷԱԾ | դրամ | 14971200 | 1 | 14971,20  |
| <b>Աշխատանքներ /հոդված-5113/</b>                                 |                                                                                                                                                 |     |      |          |   |           |
| 45231270                                                         | Վանաձոր համայնքի Վ. Համբարձումյանի անվան հրապարակի և կից այգու հիմնանորոգման աշխատանքներ                                                        | ԳՀ  | դրամ | 72996500 | 1 | 72996,50  |
| <b>Ծառայություններ /հոդված-5113/</b>                             |                                                                                                                                                 |     |      |          |   |           |
| 71351540                                                         | Վանաձոր համայնքի Վ. Համբարձումյանի անվան հրապարակի և կից այգու հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն                   | ԳՀ  | դրամ | 1294000  | 1 | 1294,00   |

|          |                                                                                                                  |     |      |           |    |           |
|----------|------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|------|-----------|----|-----------|
|          | <b>Բաժին -08 խումբ -2 դաս-4 Այլ մշակութային կազմակերպություններ</b>                                              |     |      |           |    |           |
|          | <b>Աշխատանքներ /հոդված-5113/</b>                                                                                 |     |      |           |    |           |
| 45451700 | Վանաձոր համայնքի տիկնիկային թատրոնի վերակառուցման աշխատանքներ                                                    | ԲՄ  | դրամ | 106891120 | 1  | 106891,12 |
|          | <b>Ծառայություններ /հոդված-5113/</b>                                                                             |     |      |           |    |           |
| 71351540 | Վանաձոր համայնքի տիկնիկային թատրոնի վերակառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն               | ԳՀ  | դրամ | 1911000   | 1  | 1911,00   |
|          | <b>Բաժին -08 խումբ -6 դաս-1 Հանգստի, մշակույթ և կրոն</b>                                                         |     |      |           |    |           |
|          | <b>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ /հոդված-4239/</b>                                                                             |     |      |           |    |           |
| 79951110 | Մշակութային միջոցառումների կազմակերպում                                                                          | ԷԱԾ | դրամ | 10300000  | 1  | 10300,00  |
| 79951110 | <<Կարոտ>> խորագրով համերգին Վանաձորի երգիչ, երգչուհիների մասնակցության ապահովում                                 | ՄԱ  | դրամ | 2500000   | 1  | 2500,00   |
| 79951110 | «ՖեստիՎալ» երաժշտական փառատոնի լուսավորության ապահովում                                                          | ՄԱ  | դրամ | 980000    | 1  | 980,00    |
| 92111210 | <<Վանաձոր>> երգի տեսահոլովակի նկարահանման ծառայությունների                                                       | ՄԱ  | դրամ | 320000    | 1  | 320,00    |
| 79951110 | «Վանաձորի օր» ավանդական տոնակատարության շրջանակներում երգիչ-երգչուհիների, հաղորդավարների մասնակցության ապահովման | ՄԱ  | դրամ | 10400000  | 1  | 10400,00  |
| 79951110 | «Վանաձորի օր» միջոցառման կազմակերպման ծառայությունների ձեռքբերում                                                | ԷԱԾ | դրամ | 20227000  | 1  | 20227,00  |
|          | <b>Բաժին -09 խումբ -1 դաս-2 Տարրական ընդհանուր կրթություն</b>                                                    |     |      |           |    |           |
|          | <b>ԱՊՐԱՆՔՆԵՐ /հոդված-4269/</b>                                                                                   |     |      |           |    |           |
|          |                                                                                                                  |     |      |           |    | 540,00    |
| 39263600 | Գրչատուփ                                                                                                         | ՄԱ  | հատ  | 3000      | 30 | 90,00     |
| 18931110 | Պայուսակ                                                                                                         | ՄԱ  | հատ  | 15000     | 30 | 450,00    |

\*համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի

Գնումների բաժնի պետի ժ/պ՝



Դավիթ Հակոբյան



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,

info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 սեպտեմբերի 2023 թվականի N 1255

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՄԻՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 7 ՇԵՆՔԻ ԹԻՎ 27  
ԲՆԱԿԱՐԱՆԸ ԲՈՐԻՍ ՅԱԿՈՎԻ ԱՐԱՀԱՄՅԱՆԻՆ, ԶԱՐՈՒԻ ՅԱՇԱՅԻ  
ԱՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԵՎ ՅԱԿՈՎ ԲՈՐԻՍԻ ԱՐԱՀԱՄՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Բորիս Յակովի Աբրահամյանի (1953թ.) դիմումը, ղեկավարվելով «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 1997թ. մարտի 14-ի թիվ 51 որոշմամբ, Վանաձոր համայնքի ավագանու 2001թ. մարտի 23-ի թիվ 21 և 2005թ. օգոստոսի 26-ի թիվ 212 որոշումներով՝ որոշում եմ.

1. Հանձնարարել Քաջիկ Թադևոսյանին՝ (անձնագիր՝ AT0695328, տրված՝ 018-ի կողմից 12/03/2021թ.-ին, հաշվառված՝ ԼՈՒԻ, ՎԱՆԱՁՈՐ, ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻԶԻ Փ., 37Շ. 28ԲՆ.) դիմելու ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Վանաձոր քաղաքի Ամիրյան փողոցի թիվ 7 շենքի թիվ 27 երեք սենյականոց բնակարանի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

2. Վանաձոր քաղաքի Ամիրյան փողոցի թիվ 7 շենքի թիվ 27 երեք սենյականոց բնակարանը 33 500 դրամով ուղղակի վաճառքի ձևով որպես սեփականություն՝ օտարել նշված բնակարանի վարձակալներ՝ Բորիս Յակովի Աբրահամյանին, Զարուի Յաշայի Աբրահամյանին և Յակով Բորիսի Աբրահամյանին:

3. Վանաձոր քաղաքի Ամիրյան փողոցի թիվ 7 շենքի կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի համապատասխան չափաբաժնի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է անհատույց փոխանցման շենքի թիվ 27 բնակարանի վարձակալներ՝ Բորիս Յակովի Աբրահամյանին, Զարուի Յաշայի Աբրահամյանին և Յակով Բորիսի Աբրահամյանին:

4. Քաջիկ Թադևոսյանին՝ (անձնագիր՝ AT0695328, տրված՝ 018-ի կողմից 12/03/2021թ.-ին, հաշվառված՝ ԼՈՒԻ, ՎԱՆԱՁՈՐ, ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻԶԻ Փ., 37Շ. 28ԲՆ.) Բորիս Յակովի Աբրահամյանի, Զարուի Յաշայի Աբրահամյանի և Յակով Բորիսի Աբրահամյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել բնակարանի առուվաճառքի և հողամասի անհատույց փոխանցման պայմանագիր՝ որպես նրանց ընդհանուր բաժնային սեփականություն՝ հավասար բաժիններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am, info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 սեպտեմբերի 2023 թվականի N 1256

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2, ՔՇՀ-7 ԹԻՎ 36 ՇԵՆՔԻ ԹԻՎ 15 ԲՆԱԿԱՐԱՆԸ  
ԿԱՐԵՆ ԱԼԲԵՐՏԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ, ՄԱՆՈՒՀԱԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ  
ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԵՎ ԱՆԱՀԻՏ ԿԱՐԵՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարեն Ալբերտի Սահակյանի (1966թ.) դիմումը, ղեկավարվելով «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 1997թ. մարտի 14-ի թիվ 51 որոշմամբ, Վանաձոր համայնքի ավագանու 2001թ. մարտի 23-ի թիվ 21 և 2005թ. օգոստոսի 26-ի թիվ 212 որոշումներով՝ որոշում եմ.

1. Հանձնարարել Քաջիկ Թադևոսյանին՝ (անձնագիր՝ AT0695328, տրված՝ 018-ի կողմից 12/03/2021թ.-ին, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻԶԻ Փ., 37Շ. 28ԲՆ.) դիմելու ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ-7 թիվ 36 շենքի թիվ 15 երկու սենյականոց բնակարանի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

2. Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ-7 թիվ 36 շենքի թիվ 15 երկու սենյականոց բնակարանը 32 000 դրամով ուղղակի վաճառքի ձևով որպես սեփականություն՝ օտարել նշված բնակարանի վարձակալներ՝ Կարեն Ալբերտի Սահակյանին, Մանուշակ Համբարձումի Սահակյանին և Անահիտ Կարենի Սահակյանին:

3. Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ-7 թիվ 36 շենքի կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի համապատասխան չափաբաժնի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է անհատույց փոխանցման շենքի թիվ 15 բնակարանի վարձակալներ՝ Կարեն Ալբերտի Սահակյանին, Մանուշակ Համբարձումի Սահակյանին և Անահիտ Կարենի Սահակյանին:

4. Քաջիկ Թադևոսյանին՝ (անձնագիր՝ AT0695328, տրված՝ 018-ի կողմից 12/03/2021թ.-ին, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻԶԻ Փ., 37Շ. 28ԲՆ.) Կարեն Ալբերտի Սահակյանի, Մանուշակ Համբարձումի Սահակյանի և Անահիտ Կարենի Սահակյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել բնակարանի առուվաճառքի և հողամասի անհատույց փոխանցման պայմանագիր՝ որպես նրանց ընդհանուր բաժնային սեփականություն՝ հավասար բաժիններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 սեպտեմբերի 2023 թվականի N 1257

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2, ՔՇՀ-4 ԹԱՂԱՄԱՍ  
ԹԻՎ 39 ՇԵՆՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ  
ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ  
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ  
ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտուշ Մաքսիմի Հովհաննիսյանի լիազորված անձ Կարեն Գրիգորի Գրիգորյանի 30.01.2023թ. թիվ 02/1431 դիմումը, 21.04.2022թ. տրված թիվ 1217 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 775-20220421-90-5846318), հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՐՇԱԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 20.07.2023թ. տրված շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի մասին թիվ ՎՆ1-45/23ա եզրակացությունը, 13.12.2022 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 20226EZKC6), անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /105437/, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տարոն-2 թաղամաս, ՔՇՀ-4 թիվ 39 շենքի արևմտյան մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 23.94 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 22.93քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 23.94քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի

Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տարոն-2 թաղամաս, ԲՇՀ-4 թիվ 39 շենքի արևմտյան մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք., Տարոն-2 ԲՇՀ-4 թաղամաս, 37/6 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. սեպտեմբերի 07  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 [vanadzor.ori@mta.gov.am](mailto:vanadzor.ori@mta.gov.am),  
[info@vanadzor.am](mailto:info@vanadzor.am)

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 սեպտեմբերի 2023 թվականի N1258

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՈՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ  
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

#### 1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 07 օգոստոսի 2023 թվականին կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, որի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

#### 2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 07 օգոստոսի 2023 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Տիգրան Գալոյանը Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի 77/1 հասցեում առանց շինարարության թույլտվության 1-ին հարկում կատարել է հողային աշխատանքներ:

2023 թվականի Օգոստոսի 07-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2023 թվականի օգոստոսի 15-ին իրավիրվել են վարչական վարույթի լուծման, որին պատշաճ ծանուցվել է Տիգրան Գալոյանը հիմք՝ (LO110717980AM) փոստային անդորագիր

Վարչական վարույթի լուծման Տիգրան Գալոյանը չի ներկայացել:

#### 3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և

ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 2191-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 154-րդ, 2191-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

### ՈՐՈՇԵՑԻ

1. Տիգրան Գալոյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 500.000 ( հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

2 Վերացնել վարչական իրավախախտումը:

2. Տիգրան Գալոյանին տուգանքի գումարը վճարել Վանաձորի ՏԳԲ 900235401537 հաշվարկային հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. սեպտեմբերի 07  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 սեպտեմբերի 2023 թվականի N1259

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ 3-ՐԴ  
ՆՐԲԱՆՑՔ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ  
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտակ Գառնիկի Սարգսյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ  
իրավունքների պետական գրանցման թիվ 04092023-06-0017 վկայականը, անշարժ գույքերի  
հասցեներ տրամադրելու մասին քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021  
թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ  
ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Ազատամարտիկների 3-րդ նրբանցք 14 հասցեում  
գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք.,  
Ազատամարտիկների փողոց, 3-րդ նրբանցք, 14/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. սեպտեմբերի 08  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 սեպտեմբերի 2023 թվականի N 1260

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 30 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ  
1219 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 07.09.2023 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-07092023-06-0176 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 30 օգոստոսի 2023 թվականի «Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Գ. Նժդեհ փողոց 2-րդ նրբանցք 1 հասցեում գտնվող Տիգրան Վարդանի Բաբայանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող շինությունները որպես երկու առանձին գույքային միավորներ տարանջատելու, ինքնակամ շինությունները օրինականացնելու և փոստային հասցեներ տրամադրելու մասին» թիվ 1219 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման 3-րդ կետի ա) ենթակետում «2/2 շինություն» բառերը փոխարինել «2/2 ավտոտնակ, տնտեսական շինություն» բառերով:
2. Որոշման 3-րդ կետի բ) ենթակետում «2/1 կիսակառույց» բառերը փոխարինել «2/1 կիսակառույց բնակելի տուն» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

Ճիշտ է՝  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Հ.ՎԻՐԱԲՅԱՆ